



ԲԱԺԱՆՈՂՅԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար

| | |
|-----------|--------|
| Տարեկան | 12 Ժր. |
| Վեցամսեայ | 6 » |

Արժանահամարի համար

| | |
|-----------|------|
| Տարեկան | 15 » |
| Վեցամսեայ | 8 » |

Ամերիկայի համար

| | |
|-----------|--------|
| Տարեկան | 3 ար. |
| Վեցամսեայ | 1.50 » |

ԿԱՆԻՍԻՎ ՎՃԱՐՆԵԼԻ

ՇԱՐՇՈՒՄ

Redaktion des Journal
«Charjoun»
Varna (Bulgarie)

Redaction du journal
«Charjoun»
Varna (Bulgarie)

«Шаржумъ»
Варна

«Шаржумъ»
Варна

«Шаржумъ»
Варна

ՄԱՐԿԻՐ ԱՉԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱԲԻ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ ՈՐԵՐԸ
Отговорникъ: Д-ръ Никола Бакърджиѳвъ

Մասնագրու սոյր առաջին
երեսին համար 40 սանթրիմ
է. իսկ վերջին երեսի հա-
մար 20 սանթրիմ է. երեսին
սակի սեղաններու համար
20 Օւլլ գնդը կը լայնայ:

Պուշկարիոյ համար ձեռքի
(15 ՍԱՆԹՐԻՄ)
Վառնայի համար ձեռքի 10 սանթրիմ

Արժանահամարի համար ձեռքի
(20 ՍԱՆԹՐԻՄ)

ՅՈՒՆՎԱՐ 6 Ը

«Փառք ի քարճունս Աստուծոյ եւ յիշկիս խաղաղոյրիս, ի մարդիկ հաւանորիս»:

Ամանորի հորիզոնէն լուսագեղ ճառագայթներ պահ մը ետքը պիտի աւետեն Մեծնորք Փրկչին: Բասն երկար ու ձիգ դարեր զլորած են այն օրէն ի վեր, յորմէ հետէ քրիստոնէին միտքն ու հոգին մշտ կը սլանայ անձկագին դէպի երկինք, ուր հրէշտակները Աստուծային փոզով յայտարարեցին արարատ այլ խարհի «երկրի վրայ խաղաղութիւն եւ մարդկանց մէջ սէր»: Բայց այնուամենայն ու ապականեալ մարդկութիւնը կորստեան վիճը հասած՝ յանկարծ աւետիս կը ստանար իր փրկութեանը: Խաղաղութիւնն ու սէրը պիտի թա-

գաւորէին այսուհետեւ խորտակուած բռնակալութեան աւերակներուն վրայ: Խաղաղութիւնը հաւատքի խարիսխն է եւ քրիստոնէութեան անկիւնաքարը: Անիկա եզրայրութեան ու սիրոյ մարմնացումն է:

Եւ սակայն — դառն հեգնութիւն — քսան դարերէ ի վեր բեր ազգութիւններ այդ աստուածային շնորհքներէն զրկուած կապրին: անոնք իրաւունք չունին ուրախանալու եւ հրճուելու: Դեռ հազարաւոր ժողովուրդներ սըրտերնուն մէջ կը կրեն այրող իղձը խաղաղութեան ժամանումին:

Արովհետեւ աշխարհ չանսոց ու հակառակ ընթացաւ խաղաղութեան գաղափարին ու խեղճութիւնը հրեշտակաց երգերուն վեհ իմաստը:

Խաղաղութեան փոխարէն մարդկութիւնը տարիներէ ի վեր արեւմտեան ճապարհներու մէջ կը լու-

ղայ. պատերազմը, գիտակից ու նախապատրաստուած ջարդերը, թալանները վերջ չեն գտած: Անգաղար ոճիրներ կը գործուին Աւետարանին անունով, եւ անոր հզօր պաշտպաններն ու քարոզիչները ժողովրդին տառապանքներուն ծայրածուններն են: Մեծ վարդապետին խօսքերը, «խաղաղութիւն տամ ձեզ, սիրեցէք զմիմեանս», այսօր նոյն իսկ շարագուշակ սարսուռ մը կը պատճառեն անզօրին ու տկարին:

Ինքզինքնին «Աստուծոյ ողորմութեամբ ու ժողովրդին կամքով» թագաւոր հռչակող քայլերներ, ձարեր ու թագուհիներ իրենց զինեալ ձեռքը առած՝ անխղճօրէն կը ճնշեն ու կը կեղեքեն ժողովուրդները, կը հեգնեն Աստուծոյ, քրիստոնէական ազատ սկզբունքները՝ մարդկային խիղճը խարդախութեան բեմին վրայ պատկերացնելով:

Պետական մարդիկ, զիւանագէտներն ու գիտնականները զեռկը շարունակեն իրենց ուղեղը յոգնեցնել պատերազմի անհրաժեշտութեան հարցին վրայ, առանց ուշ գնելու կոիկաւորող ազգերու հեծկլաւանքներուն Դեռ երէկ, անոնք ողջունեցին խաղաղութեան Տօնը, չի նայելով որ անդին, իրենց հրամանով կամ մեղսակից թոյլտուութեամբ հազարաւոր անմեղներ կը ջարդուին, կը կոտորուին եւ կը տանջուին վայրագօրէն եւ հազարաւոր օճախներ քարուքանդ կը լլան ահարգել:

Հէրովդէսեան գազանութիւններու, ներոնեան վայրագութեանց դէմ, գերուող ու մորթուող ազգերու ազնկաւոր ողբ ու կոծն է. «ր աիեզերքը կը թընդացնէ»:

Չիկայ խաղաղութիւն նաեւ Հայաստան երկրին համար:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԼԻԼԻՏԱ

(ՄՆՆԴԵԱՆ ԱՒԱՆԳՈՒԹԻՒՆ)

Հերովդէսի ազնիկը՝ Լիլիտա իշխանուհին, թաւշէ թիկնաթոտի վրայ յենած՝ անուշ անուշ կերպէր իր արարուհի ազախինը նուան, փետրազարդ հովհար մը կը շարժէր անոր գլխուն վերեւը, իսկ Աստուծոյ կատունն ալ մատաղ սիրուհւոյն օտքերը կը գգուէր:

Լիլիտան անգնդային նայուածքով, վարդ կոկոն չըթուներով հազիւ 15 տարին բոլորած ազնիկ մըն էր: Ան հիմակ կը վերջնէր մայրը որ իր փոքրութեանը մեռած էր. խեղճը չէր գիտեր թէ Հերովդէս զանի, նախանձէ զրգուած սպաննած էր: Միայն շատ լաւ գիտէր որ մայրը զմոտուած, մեղրի մէջ, մասնաւոր սենեակ մը կը պահուէր, ուր ինք յաճախ զայն ողբալու կերթար:

Լիլիտա հօրը մասին ալ կը մտմտար եւ հոգ կը տանէր, որովհետեւ միշտ սխուր ու հիւանդ կը տեսնէր զայն:

Հերովդէս շատ անգամ կատանձնանար սենեակին մէջ, կուլար ու կը

կոծէր, կարծես աչքին առջեւ կուգային իր սպաննածներուն ստուերները. իր աներձակը Գոստուրբ, կինը Մարիան, իր տղաքը Արիսթօրու եւ Աղէքսանար, մամր Աղէքսանարան, անոր տղան Անտիբաւտէր... Պապա-Պէն-Պոթա եւ ուրիշ շատերը:

Որչափ որ մանկամարդ իշխանուհին հօր ոճիրներէն անգիտակ էր, սակայն Հերովդէս իրեն սոսկում կը ներշնչէր...

Լիլիտան Մեծիային համար ալ կը մտածէր, որուն ծննդեանը հրեաները կը սպասէին. իր էկլա վարժուհին, որ երկու տարի առաջ մեռած էր, իրեն միշտ Մեծիայի մասին կը խօսէր:

Լիլիտան գիտէր որ Մեծիան հրեաներու թագաւորը պիտի ըլլար, եւ զուցէ իր հօր գահը յափշտակէր, բայց չէր նախանձեր:

Լիլիտան կը յիշէր Ղօշաէլն ալ, իր կաթնեղջիւրը, որ Բէթղէմէմ կը բնակէր, զայն շատ կը սիրէր եւ օր մը առանց զայն տեսնալու չէր կըրնար անցնել:

Կէս օրէն վերջը, ժամը երեքին մօտերը Լիլիտան իջու պարտէզ հինաւուրց թղենիներու շուքին տակ

պտոյտ մը ընկու: Հոն գտաւ ծերունի Չարուղոնը զոր Հերովդէս իր ազնիկն արքունիքին ծառայողներու վրայ վերակացու կարգած էր, անոր վրայ անսահման հաւատք ունենալուն պատճառաւ: Չարուղոն հրեայ հարիւրապետ մըն էր թագաւորի նախկին հրէական գրգին:

Մերունի հարիւրապետը, արեւին տակ, քարի մը վրայ նստած, կը տաքնար:

Լիլիտան զայն նշմարեց ու ըսաւ.

— Շատ տխուր կերպիս, ծերունի Չարուղոն.

— Այո, թագուհիս, որովհետեւ հարիւրապետէ մը իմացայ թէ թագաւորը հրամայեք է լուսադիմին՝ Բէթղէմէմի երկու ասրեկանէն վար ըլլող երեխաները ջարդել:

— Ահ, գոչեց Լիլիտան, ի՞նչ է այն:

— Մոգերը անոր ըսած են որ Մեծիան ծնած է, եւ որովհետեւ զեռ չը վերադարձան թագաւորին սեղեկութիւն տալու, թագաւորն ալ շուտարած է, չի գիտեր ի՞նչպէս իմանայ, ու այնպէս համոզուած է որ ըլլոր մանուկները ջարդելով Մեծիան ալ կանչեալանայ:

— Շատ ճիշդ է, ըսաւ Լիլիտան, լաւ միջոց գտեր է. եւ քիչ մը խորհելէն վերջը շարունակեց.

— Կարելի է զայն տեսնալ:

— Չո՞վ:

— Մեծիան:

— Տեսնալու համար նախ պէտք է գիտնալ ո՞ւր գտնուիլը. եթէ այդ յայտնի ըլլար, թագաւորը մէկին համար ամբողջը չը պիտի ջարդել տար:

— Ընդմարտ է, պատասխանեց Լիլիտան, ցած ձայնով. կարծես վախնալով եւ շարունակեց — հայրս վատ մարդ է:

Բայց, Ղօշաէլս, արդեօք անոր ի՞նչ պիտի հանդիպի:

— Ղօշաէլը ուրիշ մանուկներու հետ միասին պիտի մեռնի, որովհետեւ զինուորներուն հրաման կայ ամէն տունները խուզարկել. պատասխանեց Չարուղոն:

— Բայց ես հաւատացած եմ որ Ղօշաէլը Մեծիան չէ, ինչպէ՞ս կարելի է Մեծիան ըլլայ, քանի որ կաթնեղջիւրս է:

— Չեր հօրմէն անոր համար շնորհ խնդրեցէք, թագուհիս:

— Չեմ կրնար յանդգնիլ, սակայն հիմակ նուսային հետ կերթամ եւ Ղօշաէլը իմ քովս կը բերեմ, հայրս չի կրնար իմ սենեակս գալ, պատասխանեց Լիլիտան:

Հոն՝ ստորագրածներու և ձեռնի թանձր խաւերուն տակ՝ ծածկուած է իր անակիւն մէջ ահաւիր ոճիր մը։ Դաշտերն ու ռարերը ամալացած, գետերն ու սահանքները սառած են համակերպիւնքը մութ է ու սգաւոր։ Մահուան անազորոյն ժանգաղը անկէ սրած ու հնձած է կեանքը։ Կեղծ քրիստոնեայ աշխարհը լըր-բորէն արտօնեց գազան փառի-շահի մը սանձարձակ խողխողել ալն ցեղը՝ որուն ալեւոր մոգերը Փրկիչ-Մանուկին բազաւոր ծը-նունդը աւետող աստղը տեսեր էին, և որոնք իրենց էն թանկագին ընծան մատուցեր էին անոր։

Այդ գծաւոր երկրին մէջ, սուգին ու վիշախն ծանրութեան տակ թաղուած գեղջկական և կեղեցիկներու զանազանքը տխուր մեղեդիներով կը զողանջեն... Ժամ կը հրաւիրեն բարեպաշտ հայը Փրկիչին ծնունդը աւետելու։ Տոգոյն ու յուսահատ երգեցողները կը շնչան Բեթլէհեմի հովիւներուն ու հրեշտակներուն զուարթ երգերը։ Իսկ անհալ վշտով մորմոքուող ամբոխը՝ արցունքն աչքին՝ կը գիմաւորէ աս ամէնը։

Սգաւոր է Հայաստան, սգաւոր է հայ ժողովուրդը։ Այն մէկ Բեթլէհեմի գիշեր զրնայ ամոքել ի՞նչ անփոխարինելի կորուստները։ Հայերը այդ Աստղէն շարաշար խաբուեցան։

Հայը ամբողջովին վշտի ու արեան մէջ լողաց ալն օրէն՝ երբ ի՞նչ բազմաթիւ այդ Աստղին յանձնեց։

Դարերէ ի վեր անբախտալ հարսեր իրենց ամուսինները

կողբան, անբազմաթիւ իրենց զաւակները կը փնտռեն, որոնք խոնառ ու մաշվ բանտերու մէջ՝ բռնութեան շղթաները կը քաշկռտեն վրէժի փրփուրը բերանին, և անմեղունակ որբիկներ վշուր մը հաց կաղաղակեն։ Աւ գարեթէ ի վեր նոյն օրը ու նոյն ժամուն, և կեղեցիկներուն մէջ կը կրկնուի հրեշտակ-հովիւներուն զուարթ երգը. «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն. ի մարդիկ հաճութիւն»։

Կժ՞՞՞ Ժողովուրդ, անգո՞ւթ հեղուկութիւն, որ թշուառ անապախալին կուրծքէն կը խլէ դառն բողբոջի աղաղակը այս ըմբոստացուցիչ խաբէութեան դէմ։

Սօֆիա, 3 Յունուար

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

4. ՊՕԼԻՍ, 25 Դեկտեմբեր

Յուրա է, ցուրտ, երկու օր է անդաւար ձիւն կուգայ, վա՛յ ազբատներուն։

Օրմանեանի սիրտը ձիւնի ու ցուրտի չի նայիր։ 2-300 ոսկի խնդիր կայ, ալ ցուրտը ո՛ւր կը մնայ, Հայ կաթոլիկներու պատրիարքը, Էմմանուէլեան եպիսկոպոսն ալ հիւանդ էր, իրենց հիւանդանոցի տունին օրը չի կրցաւ երթալ, իր ներկայութիւնով փառաւորել հանգէսը, բայց նոյն իրիկունը ելաւ Երլտըզ իֆտարի գնաց, կերակուրները լափլիփեց Օրմանեանի հետ... 200-300 ոսկի առին, 200 կաթոլիկներուն, 300 մերը — Լուսաւորչա-

կաններունս։ Համիտ իր շնիկները չի մոռնար. 22 միլիոն ժոժողովրդի ոսկիներէն անոնց ալ երբեմն ոսկր կը նետէ, որ կըրծեն...

Գուրը ցուրտ է, իս՛, Օրմանեանի սիրտը տաք։ Կատակ մի կարծէք, լոյսի նշոյլ մը, կենդանարար ճառագայթ մը մտեր է սիրտը, թերեւս ինքը ընտրուի կիլիկիոյ կաթողիկոս... Այն ու փուճ Օրման։

Կատուն երբ մուկին ետեւէն կիլիկոյ, մուկը «սուտ ստոկիլո» կը ձեւացնէ, անձայն անշտրժ կը մնայ, իսկ տակէն փախչելու հնարներ կը խորհէ։ Արթին փաշան ալ այսօր «սուտ ստոկիլո» է ձեւացուցեր, ձայնը ծայտուն չի ելլար։ «Իրօ Արմէնիա» նոր թերթին մերկացումները դիմակը պատուեր են... բայց զգո՛ւ մնալու է, տակէն հնարներ կը խորհի ազգասէրներու, մարդասէրներու և յեղափոխականներու դէմ։ Ա՛յ թէ մէյ մը այդ փիլյար ըսուած անձը ձեռքս իյնայ, կը մտածէ մարմնաւոր և հոգեւոր հրէշ Արթինը...

Ռամազանը իր կարգով առաջ կը քալէ, տարի մըն ալ խլելով Համիտի գարշելի կեանքէն, Համիտ քայլ մըն ալ գերեզմանի կը մօտենայ, բայց նորէն չի հասկանար աշխարհի ունայնութիւնը, նորէն իր պոզալի կեանքը ապահովելու միջոցներ ձեռք կառնէ։ Ա. գիղ ամիս մըն է կուսակցի տակն ու վրան համազգեստով ու ծայտալ լրտեսներ ու բողբոջներ կը վխտան։ Անցեալ օր յոյն և հայ երկու յայտնի և

բաւական հարուստ վաճառականներ կամուրջին վրայ կեցած կը խօսէին, փօլիս մը խկոյն մօտեցաւ և «հոս կայնիլ խօսիլ արգելուած» է ըսաւ։ Անոնք ալ շնիկներու պէս պոչերնին քաշեցին ու հեռացան։

Պէշիկ-Պաշ, Ղալաթիա, Սիրքէճի հսկողութիւնը տասնապատուած է։ Հայերն ու Խալապիները քօլերայէն, ժանտախէն ալ աւելի երկիւղ կը ներշնչեն։

Մայիսի քաղաքի ձերուսի մը (70 տարին մօտեցած), Եկեղեցեան ազգանունով, իրեն պէս ծեր ընկերի մը հետ սոսց վրայ գործեր կընէին։ Անցեալ օր աս երկուքը իրարմէ դժգոհ, վիճարանելով կանցնէին մեծ կամուրջէն, վէճը կը տարնայ։

Եկեղեցեանի ցած ընկերը թուրքերէն լեզուով կը պոռայ. դուն չէ՞ր որ քու զաւակներդ ամերիկեան հպատակ և յեղափոխական ըրիր և սակէ փախցուցիր։ Փոխիները կը թափուին խեղճ ծերուկին վրայ և խկոյն լանտ կառաջնորդէն։ Մինչև օրս բանտն է։

70 տարեկան, շարժելու հազիւ ընդունակ ծերերն ալ Համիտի աչքին «գրող» կերուան, անոնցմէ ալ կը սոսկայ...

Նոր ձերբակալութիւնները խենթութեան աստիճանի հասած են, բռնածին բանտ... իսկ թուրքերու վիճակը մեղմէ աւելի նախանձելի չէ։

Կը հասնա՞ք, աս ամենը կրկնակի նպատակով կըլլան։ Մէյ մը կուզեն թաց ու չոր հաւասար բանտ տանելով՝ թերեւս յեղափոխական մըն ալ բանտ նետած ըլլան և Խրիստոս-Շէրիֆի օրը հրէշին կեանքը մարգ-

Լիլիտան քառասնի կուրծքով մը նունայի հետ խկոյն Բէթլէհեմ մեկնեցաւ և երբ Դոշաէլի մօր տունը մտաւ, բացաղանջեց մանուկը գրկելով։

— Ախ, Դոշաէլ, որչափ ատեն է գրկել անսած չեմ, տատարկա։ Ապա մօրը դառնալով շարունակեց. լսէ, Ձեզուտա, մանուկը կաթէն կարած ես, ալ ետեւէդ չիլար, քանի մը օրուան համար թող ինձի հիւր մնայ, ես պահեմ։

Ձեզուտան շատ ուրախացաւ իրեն ըրած պատուին համար. Լիլիտան մանկիկը անկողնով շուտ մը արքունիք հասաւ։

Լիլիտան հաղիւ իր բնակարանը հասած էր, երբ հաւատարիմ նուան իմացուց որ Հերովդէս գինքը անսնի կուզէ։ Մանկամտորդ իշխանուհին, ամբողջ մարմնովը սարսուղով շուտով մանկիկը պահեց և զողալով իր հօրը ներկայացաւ. Հերովդէս շատ խռոված ու գայրացած կերեւար, Լիլիտան զայն զուարթացնելու և զրօնեցնելու համար՝ նուազելու և երգելու հրաման ուղեց։

Թագաւորը մեծ ուշադրութեամբ աղջիկը կը դիտէր. աչքերը շեշտակի սեւեւած անոր ծովու նման աչքերուն

մէջ և կարծես գերբնական ուժէ մը ազդուածի պէս՝ քարացած մնաց ու անանց բան մը ըսելու դուրս ելաւ, մասնակով։

— Կը նմանի, այո, շատ կը նմանի մօրը, իր հրացայտ նայուածքը այնչափ թափանցիկ է որ, աչքերուն մէջ նայել չը կրցայ։ Այդ նայուածքը գազանն ալ կը զսպէ, եւ ի՛նչ կեփարի նման հասակ, գլուխս դարձաւ։ Ախ, շատ կը սիրեմ գինքը, բայց քովը կենալու ուժ չունիմ. որովհետեւ կզգամ որ անապին իշխանութիւն ունի վրաս, բան մը չեմ կրնար իրեն մերժել։ Աս գեղեցկութիւնը Աստարդէ գիցուհույն գեղեցկութիւնն ալ կը նստմացնէ։

Հերովդէսի գուրս ելլալէն վերջ, Լիլիտա իսկոյն պարտէզ իջաւ։ Մերունի Ձարուզոն հոն էր և կուլար...

— Ինչո՞ւ կուլաս, հեղահամրոյր ժպիտը շուրթերուն՝ ձերուկին մօտենալով ըսաւ Լիլիտան։

— Պատճառը դուք գիտէք, հրաշալիք իմ թագուհի, թագաւորը կարգադրած է Մեսիան սպաննել։

— Բայց, պատասխանեց Լիլիտան, եթէ նա ճշմարիտ Մեսիան է, մար-

դիկ չեն կրնար անոր վնասել. զայն սպաննելու ուժը եւ կարողութիւնը չունին։

— Աստուած կուզէ որ անոր օգնեն, թագուհիս, ըսաւ Ձարուզոն, գուր որ բարի ու գթած էք, պէտք է որ Մեսիայի ծնողներուն իմաց տաք։

— Ո՛ւր պիտի գտնամ զանոնք։

— Հարցուցէք Բէթլէհեմի բնակիչներուն։

— Բայց պէ՞տք է արդեօք այդ մանուկը փրկեմ, որ վաղը հօրս թագը պիտի յալշտակէ թերեւս, զանի հալածէ և զիս ալ իր արքունիքին ազախիւր ընէ։

— Աս շատ հեռու է, թագուհիս, շատ հեռու։ Մեսիան զիս աղիկ մըն է, ինչպէս Դոշաէլը, եւ յետոյ՝ երբ ան թագաւոր ըլլայ, չափազանց բարի պիտի ըլլայ, ոչ միկուն շարութիւն չի պիտի ընէ. գուցէ ան ատեն դուք ալ աղջիկ մը ունենաք և Մեսիան անոր հետ ամուսնանայ։

— Բայց ան է արդեօք ճշմարիտ Մեսիան, հարցուց Լիլիտան։

— Այո, պատասխանեց Ձարուզոն, որովհետեւ Բէթլէհեմ ծնած է, մարգարէներէն գուշակուած օրը, մոգերը անոր աստղը Սրեւելքի մէջ տեսեր են։

— Մեսիան գեղեցիկ պիտի ըլլայ, իր

եթէ զիս փոքրիկ է. այնպէս չէ՞ ձերունի Ձարուզոն։

— Թագուհիս, մարգարէները գրած են որ աշխարհի մանուկներուն ամենէն գեղեցիկը պիտի ըլլայ։

— Պիտի երթամ զայն տեսնելու, Լիլիտան, այս խօսքերէն վերջ հեռացաւ։

Միջոցով վրայ էր, արեւը լեռներու բարձր կատարներէն հեռանալով անոնց ետին կը պահուէր։

Լիլիտան նուանայի հետ գաղտուկ իր բնակարանէն գուրս ելլելով՝ նորէն Բեթլէհեմ գնաց։

Ճամբան կը մտածէր.

— Ձեմ ուղեր Մեսիան փրկիլ, որովհետեւ օր մը ան հայրս պիտի հալածէ և գահը պիտի խլէ. բայց չեմ ալ փափաքիր որ այդ մանուկը սպաննեն, զայն կը փրկեմ եւ յետոյ հօրս կիմացնեմ Մեսիային ուր ըլլալը։ Կառնեմք իմ արքունիքս, կը մեծցընենք և այդպէսով ալ արգիլք կըլլանք անոր թագաւորելուն։

Լիլիտան դարձեալ Ձեզուտայի խրճիթը մտաւ և տեսաւ որ ամուս-

կուլթեան համար ապահով-
ցուցած ըլլան, մէյ մըն ալ որ
համիտի բարձրագոյն ներման
ծաղրածութեան համար աման
ապրանք պատրաստ ունենան :

Աս երկու օրերս Մշոյ առաջ-
նորդ Բարկէն վարդապետ կը
պատուի հոս : Գիտեք որ զայն
արձակել ու ուղիք ելաւ Ռուսա-
կան դեսպանը, գիտեք որ Սպա-
ղանքի « յեղափոխականներուն »
օգնութիւն հասցնելու մէջ կը
մնղադրուի : Կը գուշակէք նաեւ
որ ասկէ մեկնած քննիչ-յանձ-
նաժողովը որ իր գրպանի մէջ
պատրաստ տարաւ իր ենթագրե-
լիք ամէն ձեւերն և մեղադրու-
թիւնները՝ այդ քննիչներու ձեռ-
քով և Երևանը հրամանով մեղադ-
րուեցաւ : Երբ Բարկէն գալ հաս-
նի հոս, ամենէն առաջ պէտք է
ուսուկանատուն Շէֆֆիք պէյին
երթայ, թերեւս հարցու փորձի
ենթարկուի և եթէ Շէֆֆիք բա-
րեհաճի՝ ետքէն պիտի երթայ
Օրմանին :

ԲԱԺ

ԿՈՎԿԱՍՏԱՆ ԼՈՒՐԵՐ

Անցած անգամուան « Կովկաս-
եան լուրեր »-ով հարգուած էինք
թէ « Հրատարակչական ընկերու-
թիւնը » Ռուս կառավարութեան
հրաման ստացած է մօտ օրերու
մէջ ընդհ. ժողով գումարել և
ընկերութեան գոյքերուն որու
յանձնուիլը որոշել վերջնակա-
պէս : Ընկերութեան 38րդ յօդ-
ուածը կը արամագրէ այդ գոյ-

նոյն հետ ծնկաչոք ազօթ կընէին :
— Տղան շատ աղէկ է, կը քնանայ
ևս եկած եմ Մեսիտին երկրպագելու,
որ կը գտնուի, ցուցուցէք ինծի
ըսաւ Լիլիտան :

Միթուէլ, Ձեզուտայի ամուսինը
պարզ ու արդար մարդ մը, ինք ոչ
օքի չարիք կրնար հասցնել ևս ոչ
ալ կրնար երեւակայել թէ ուրիշ-
ները կրնան չարիք գործել :

Լիլիտան առաջնորդեց մինչեւ
այն ախոռը ուր մտուրի մէջ Յիսուս
ծնած էր և ինք ետ դարձաւ :

Լիլիտան ապշած մնաց. ինք շող-
չողուն գորգարուած, թագաւորական
հմայիչ բան մը կսպասէր, իսկ իրեն
ներկայացաւ մտուր մը, ջորի մը,
արհեստաւորի կերպարանքով հասա-
րակ մարդ մը և նրբակալմ, տղոյն
համեստ հագուած շատ զեղեցիկ կին
մը. մանկիկն ալ ուրիշ մանկիկնե-
րու կը նմանէր :

Բայց երբ մօտեցաւ, նշմարեց թէ
մանկիկին աչքերը սովորական աչ-
քերու պէս չէին փայլեր, զէմքը
անհուն բարութիւն կարտայայտէր
ու իր ցովքերով մտուրը կը փայլե-
ցնէր :

Լիլիտան մօտենալով մանկան մօ-
րը հարցուց .

- Ի՞նչպէս կը կոչուիք :
- Մարիամ
- Փոքրիկը :

քերը յանձնել հայոց հոգեւոր
գպրոցներէն մէկուն, երբ ինք
գոյութիւն ունենալէ գաղբի ալ-
եւս :

Կառավարութեան այդ վայրե-
նի հրամանէն յետոյ, Երևանի
գպրոցին հոգաբարձութիւնը
խնդրած էր, որի գոյքերը
Երևանի վարժարանին յատկաց-
ուին :

Ընդհ. ժողովը գումարուած է
դեկտ. 10ին : Ահա թէ ի՞նչ է
գրուած այդ մասին « Մշակ » 23րդ
թիւին մէջ : « Թիֆլիսի քաղաքային
գումայի գահիճում կայացաւ
Թիֆլիսի հայոց հրատարակչա-
կան ընկերութեան արտակարգ
ընդհանուր ժողովը, որ գու-
մարուած էր խորհուրդ ընկե-
րութեան գործերի մասին նրա
փոկման առիթով : Ժողովը էին
29 հոգի ընկերութեան անգամ-
ներինց : Նախագահու էր Ա. Բա-
լանթար : Վարչութեան ներկա-
յացրած ղեկուցումից երեւոց,
որ ընկերութիւնը տպագրել է
ներկայ 1900 թուականին 19 գիրք
որոնցից 16ը արգէն լոյս են տե-
սել, իսկ երեքը դեռ տպարա-
նումն են : Ընկերութիւնը ունի
191 նոսրեր հրատարակութիւն,
որոնց արժէքը գրքերի վրա
նշանակված գնեքով, հաս-
նում է մօտ քառասուն հազար
րուբլու : Ընկերութիւնը ներկա-
յումս կանխիկ գումարներ չունի
իր գրամարկում, բացի Ա. Պօ-
ղոսեանցի նուէրից, որն ըստ
պայմանի պէտք է վերագործի
նուիրատուի լիազօրներին : Ըն-
կերութիւնը պարտ է մնացել
թղթավաճառներին, հեղինակ-
ներին, տպարաններին մօտ 3000
րուբլի : Ընդհանուր ժողովը,

- Յիսուս :
- Շատ խելացի կերեւայ :
- Ինչպէս որ կը տեսնաք :
- Թոյլ կուտա՞ք զայն հօմբուրի :
- Այո :
- Լիլիտան ծոցաւ ու մանկիկը
համբուրեց, բայց Մարիամ խոժո-
ռեցաւ երբ նկատեց որ արքայազուն
օրիորդը երկրպագութիւն չըրաւ :
- Ուրիշն աս մանկիկը Մեսիամն
է, հարցուց Լիլիտան :
- Ինչ կըսէք, պատասխանեց
Մարիամ :
- Եւ հրէից թագաւորը պիտի
ըլլայ :
- Աստուած է զրկողը աս բանին
համար :
- Ի՞նչ, ան ասեմ նա պիտի կուրի,
պիտի մարդիկ սպաննէ, պիտի ապս-
տամբի Հերովդէսը վար առնելու հա-
մար և կամ անոր գահը պիտի յս-
ջորդէ :
- Ոչ, պատասխանեց Մարիամ.
Անոր թագաւորութիւնը աս աշխար-
հէն չէ, ան գորքեր չի պիտի պահէ,
պալատականներ չի պիտի ունենայ,
սուրբ չի պիտի առնէ և Գէնէսարէ-
թի լճի էն աղքատ ձկնորսներուն պէս
պիտի ապրի : Ան հնազանդներուն ու
պղատիկներուն պիտի ծառայէ, հի-
ւանդները պիտի դարմանէ և վշտաց-
եալները պիտի մխիթարէ, պիտի
սպրկեցնէ բարութիւն, և արդարու-

ւելով վարչութեան ղեկուցումը
գործերի գրութեան մասին, ալ
և Երևանի լիակազմի գպրոցի
հոգաբարձութեան գրութիւնը,
որով նա խնդրում է յատկացնել
ընկերութեան կայքը յիշած
գպրոցին, կայացրեց հետեւեալ
որոշումները. 1. նուիրել ընկե-
րութեան ամբողջ կայքը Երևանե-
ան գպրոցին. 2. բնարել լիկ-
վիցացիական մի յանձնաժողով,
հինգ հոգուց բաղկացած, որ վար-
չութեան հետ միասին մաքրէ
ընկերութեան հաշիւները, հա-
տուցանէ ընկերութեան պարտ-
քերը. ժողովէ տպագրիչները և
յանձնէ Երևանի գպրոցի ներ-
կայացուցիչներին մնացած կայ-
քը. 3. յանձնել վարչութեանը՝
բանակցութեան մասին Ա. Պօ-
ղոսեանցի լիազօրների հետ վե-
րագարներու նրա նուիրած գու-
մարի մնացորդը և գրքերը 4.
լէքվիտացիայի համար ժամանակ
նշանակել մինչեւ մարտի վերջը.
5. պարտաւորեցնել վարչութիւնը
և լիքվիցացական յանձնաժո-
ղովին իրենց պարտավունքները
վերջացնելուց յետոյ տալ հաշիւ
լրագիրներու միջոցով կամ ա-
ռանձին հրատարակութեամբ, և
յատկացնել ընկերութեան գրա-
սենեկապետին մի տարուայ ու-
ճիկ : Յանձնաժողովի անգամներ
ընտրվեցին Յ. Ամիրխանեան,
Ս. Խարազեան, բժ. Ա. Խատիս-
եան, Ա. Մելիք—Այվազեան և
Լ. Սասուեան :

Մինչեւ հիմա գործադրուած
սովորութեան մը համեմատ,
Կեկեկեմբեր 3ին Մօսկուայի մէջ
տեղի ունեցեր է հայկական երե-
կոյթ մը՝ յօգուտ Մօսկուայի հա-
մալսարանի չքաւոր հայ ուսանող-

թիւն, պիտի իշխէ մարդկութեան
սրտին և ոչ թէ մարմնոյն վրայ :
Ինք պիտի տառապի, մեղ տառապել
ստիպեցնելու համար : Անիկա ար-
ցունքի, բարեգործութեան ու ա-
զօթի թագաւորը պիտի ըլլայ : Անիկա
սիրոյ աստուածն է, որովհետեւ աւ-
խարհը պիտի սիրէ և սիրողներուն
պիտի ցուցնէ ուրախութեան ու եր-
ջանկութեան յարգը գիտնալու կեր-
պը : Իր անհուն գթասիրութիւնը
պիտի շնորհէ անոնց որոնք թէև
սակաւին անզօր են, բայց սիրել գի-
տեն, անոնց որոնք կզգան թէ ի-
րենց նմաններուն եղբայր են : Մարդ
միայն իր անձին համար չէ որ կապ-
րի, իրաւ է որ գահ ալ պիտի ունե-
նայ :

— Ահ, տեսոր, ինչո՞, համար է
ատ, մէկէն ըսաւ Լիլիտան :

— Բայց, շարունակեց Մարիամ,
անոր գահը խաչը պիտի ըլլայ. ան
խաչի վրայ պիտի մեռնի, մարդկու-
թիւնը փրկելու և մեր մեղքերը
քաւելու համար :

Լիլիտան Աստուածամօր խօսքերէն
յափշտակուած սքանչազումով մտիկ
կընէր, երբ նկատեց որ մանկիկին
սիրուն աչքերէն բոցեղէն լոյս մը կը
թայթէր. իսկոյն ծուկն չքեցաւ ու
սկսաւ ջերմեանդութեամբ երկրպա-
գել :

— Ես մինչեւ հիմա ասանկ բաներ

ներուն : Երեկոյթին մասնակցած
են ամէն զատակարգէ անձնաւու-
րութիւններ : Երաժշտական
խումբը՝ երգած է, ի միջի այլոց,
« Բամբուրուտան », « Արեւն ելաւ »,
« Զէյթունցիներ » և այլն :

Փոքր գահիճին մուտքի դի-
մացի պատը զարգարուած է ե-
ղեր « Գիշերը կովկասկան ափե-
րում » — Այլազովսկիի նկարներէն
մէկով : Անոր ձախ կողմը գրուած
է եղեր հանճարեղ նկարիչին
կիտարձանը : Գահիճին ալ պատը
ներկայացուցած է հոշակաւոր
նկարիչին շատրուանը թէօթօ-
սիայի մէջ, ձախ պատը՝ նկարի-
չին առնը նորէն թէսոգոսիայի
մէջ :

Իսաական հո՞՞ք բազմութիւն մը
ներկայ գտնուած է :

« Մշակ »-ը իր 229 թիւով գե-
ղեցիկ յինադատական յօդուած
մը հրատարակած է խորէն Ստե-
փանէի տարօրինակ կտակին առ-
թիւ, ճիշդ այն ճշմարիտ և իրա-
ւացի փաստերով, ինչպէս « Ծար-
ժում »-ը վերջաց ընել :

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Ամերիկայի և Եգիպտոսի չը
վճարող բաժանորդներուն. — Կը
խնդրենք շտապել բաժնեգին-
ները մինչեւ Փետրուար մէկ ան-
պատճառ հասցնել մեզ : Մինչեւ
այդ ժամանակ չը վճարողներուն
այլևս « Ծարժում » չի պիտի զըր-
կուի : Միեւնոյն ժամանակ չը
վճարողներուն անունները պիտի
հրատարակուի « Ծարժում »-ի մէջ :

—) —

չէի լսած. հիմա լաւ կըմբռնեմ թէ
ինչո՞ւ Հերովդէս կուզէ մանկիկը
սպաննել :

Մտիկ ըրէ, Մարիամ, հոս մի՛ կենաք
առէք մանկիկը ու ջորիով փախէք,
անասունի համար ես պիտի վճարեմ :

Բեթղէմէյի բլուրներուն շուրջը,
զարձգարձիկ արահետներէն ման
գալով՝ դաշտ ելան Յիսուս, մայրը
Յովսէփ, Լիլիտան, նոսնան ու ջո-
րին :

— Հոս ձեզ պիտի թողու՞մ, ըսաւ
իշխանուհին, ես Լիլիտան եմ, Հե-
րովդէս թագաւորին աղջիկը, յի-
շեցեք զիս :

Երբ Մարիամ Յիսուսը գրկած և
ջորին հեծած՝ Յովսէփի հետ ճամբուն
աջ կողմէն կը հեռանային. Լիլիտան
զանոնք կը դիտէր և մանկան լու-
սավառ պսակէն այդ մթութեան մէջ
հրճուանք կզգար :

Պսակի ցովքը անհետելու վրայ էր
թղնիներու մէջ, երբ ճամբու ձախ
կողմէն նշմարուեցաւ հոովմէական
հեծելագունը մը որ դէպի Բեթղէմ
կը սլանար՝ մանուկները շարդելու :

ԹՂԹԱԿԻՑ

Սօֆիա, 3 Յունուար

—) —

Ալեքսիոյ մէջ, թուրքախառն մե-
ներ է, 23 տարեկան ծաղիկ հա-
սակին մէջ, Յովհաննէս Շաւարշ
(Սիւլվէստրան) «Համալսարան»
ամսական թերթի արտատրոգ խմբ-
բարդներէն մին:

Յ. Շաւարշ Սանասարեան գրա-
րոցէն էր և Բարիլի համալ-
սարանին մէջ գրականութեան
ծիւղը կուտումնասիրէր. միևնոյն
ժամանակ կաշխատակցէր «Շար-
ժում»-ին ինչպէս նաև ուրիշ
քանի մը հոյ թերթերու:

23 տարեկան հասակին մէջ ան
կաշխատէր տարեց մարդու մը
համբերութեամբ և կուզէր օգ-
տակար ըլլալ հայ ժողովրդին.
սակայն անգութ մահը խոյտա-
կեց այդ լուրջ ձգտումներով ու
տրամադրութիւններով ի ընդու-
նակ երիտասարդը:

Մեր անկեղծ ու խորին յար-
գանքը իր յիշատակին:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Ալեքսարդ պատմաբան հնախոյզ
Պ. Ա. Երեցեան ծանր հիւանդ է
եղեր, սակայն հիմա տագնապը
անցուցեր է:

— Թիֆլիզի Յովնանեան աղ-
ջկանց վարժարանը այս յունուա-
րին վերստին պիտի բացուի:

— Վրաստանի և Իմէրէթի թե-
մական վարչութեան կաթողիկո-
սական կոնդակով հրամայուե-
ր է առանց ծայրագոյն հոգեւոր իշ-
խանութեան հրամանի, ոչ ոք չի
թաղել եկեղեցւոյ գաւիթներուն
մէջ:

— Մայր Աթոռի տնտեսական
վարչութեան վրայ ընդհանուր
վերահսկող կարգուած է Գարե-
գին վարդապետ Սաթանեան:

Այդ վարդապետը դժբախտա-
բար ստակ շատ կը սիրէ:

— Այտընի հայոց եկեղեցին
գողեր մտնելով 100 սակի ար-
ժողութեամբ եկեղեցական ա-
ռարկաներ գողցեր են:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Քոսովայի նահանգի Շիփպ քա-
ղաքին մէջ պուլկարներու և
թուրք զօրաց ու ոստիկաններու
միջեւ արիւննայեղ ընդհարում մը
տեղի ունեցեր է, թուրքերէն
բաւական սպանուածներ կան.
շատ պուլկարներ ձերբակալուած
են. զօրքին օգնութիւն չըկուե-
ր է: Ընդհարման վայրը եկեր են
նաև վալիի ու ոստիկանութեան
պետը ուրիշ պաշտօնեաներու
հետ միասին: Շիփպ 20000 բնա-
կիչ ունի, որուն 11000ը պուլկար
են:

— Քրթական Շարֆ ցեղը, թուրք
պարսիկ սահմանին վրայ բնա-
կող, որուն պետն է ինչ որ
Մահմուտ փաշա մը, պարսկական
Քերմանդահ նահանգը արշաւե-
ր է: Պարսից դեսպանը հրաման
ստացած է բողոքել Բ. Դրան, այդ
ցեղին պառճառած փաստերու
հատուցումը և պարսկական հո-
ղէն ետ քաշուիլը պահանջել:

Պարսից դեսպանը հրաման
ստացած է նոյնպէս Բ. Դրան դի-
մել թուրք-Պարսկական սահմա-
նազուլաններու առկախ մնացած
խնդիրը կարգադրելու համար:

— Պուլթանը մասնաւոր պատ-
գամաւորութիւն մը կը զրկէ Պեր-
լին Բրուսական թագաւորութեան
հիմնընդուն Լրկհարիւրամեակին
յոբելեանին մասնակցելու հա-
մար:

— Պոլսոյ մէջ ժանտախտի գո-
յութիւնը հաստատուե-
ր է: Ռու-
մանական կառավարութիւնը
խիստ քարանձիկա նշանակիւր է
Պոլսէն եկած ամէն բանի վրայ.
կը կարծուի թէ Պուլկարիա ալ
նոյն խտուածեամբ պիտի վար-
ուի:

— Դեսպանները որոշած են Բ.
Դրան հաւաքական ծանուցագիր մը
զրկել յայտարարելով որ միմիայն
միջազգային առողջապահական
խորհուրդը իրաւունք ունի ա-
ռողջապահութեան վերատեսուչ
ընտրել, ուստի Սուլթանի նշա-
նակումը անընդունելի է. կա-
ռավարութիւնը միայն դեսպան-
ներու ընտրութիւնը հաստատե-
լու կամ մերժելու իրաւունքը
ունի:

— Օսմանեան հանրային պար-
տուց խորհուրդը որոշած է նա-
խազանութեան խնդիրը վիճա-
բանութեան դնել յունուար 11ի
նիստին, ուր պիտի որոշուի որ
նախազանութիւնը փոխն ի փոխ
ըլլա՞յ, թէ ընտրովի:

Թ Ր Ա Ն Ա Վ Ա Լ

Պօէրները չեն ընկճուիր, ե-
ռանդին կարծես կը կրկնա-
պատկուի, Լօրտ Բիչնէր իր տրա-
մագրութեան տակ գտնուած ու-
ժերով ինքզինքը անկարող կը
ըզայ այդ քաջերը զսպելու, և
օգնութիւն կուզէ:

Քարի վիճակը օրէ օր վտոն-
գատու կը դառնայ 500 պօէր,
դէպի այդ գաղութին սիրտը
կուղղուին:

Լօրտ Քօլրիճ չի կրնալով
մասնակցիլ ազատամիտներու կող-
մէն տրուած ճաշի մը իր ներո-
ղութեան նամակին մէջ գրած է
հետեւեալ տողերը Անգլո-թրանս-
վալեան պատերազմին համար:

«Ես կը սարսուփիմ այդ պա-
տերազմէն, այն քաղաքականու-
թեանէն որ զայն ստեղծեց, այդ
պատերազմը մղելու ձեւէն և վեր-
ջապէս այն անպատուաբեր ոգե-
ւորութեանէն որ ցոյց տրուեցաւ

մի բուն գիւղացիներու կոր-
ծանման հանդէպ. գիւղացիներու
որոնք իրենց երկիրը կը
պաշտպանեն իրենցմէ տասնա-
պատիկ աւելի կանոնաւոր զօր-
քերու դէմ, որոնք կը վարուին
և կը հովանաւորուին հարուստ
Անգլիայէն:

— Քրիւկէրի փեսան, Էլօֆ
որ գացեր է Լօնտրա պօէրներուն
համակողմնոր հետ խորհրդակ-
ցելու համար, կրկին Լահէ վե-
րագրած է:

— Պրետերիք Հարիսօն Լօն-
տրայի մէջ, Թրանսվալի վրայ
ըրած, ատենախօսութեան մը
միջոցին իր ցաւը յայտնելով որ
Անգլիա դադրած է մարդկու-
թեան միւս մասերուն գաղափա-
րակից ու զգացումներուն մաս-
նակից ըլլալ է, իր խօսքը կը
վերջացնէ հետեւեալ տողերով:

«Քարի գաղթականութիւնը այ-
սուհետեւ Անգլիոյ համար երկ-
րորդ Իրլանտա մը պիտի ըլլայ.
պատերազմը դեռ 16 ամիս, գու-
ցէ 16 տարի ալ տեւէ, ոչ ոք
գիտէ անոր վերջը. նոյն իսկ
պատերազմը սկսողները»:

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Կայսեր եղբայրը իշխան Չուն
Սինկան Ֆուէն Իեքին եկեր է և
կը յայտարարէ յոր կայսրուհւոյն
աղքեցութիւնը անսահման է:

Իշխանը այցելել է Կերմանա-
կան դեսպանին և յայտարա-
րե-
ր է թէ Պերլին պէտք է եր-
թայ Վիլհելմէն ներդրութիւն
խնդրելու Գէթթերի սպաննու-
թեան համար:

— Սինկանէն ստացուած հե-
ռագիր մը կը հաղորդէ թէ
կայսրն ու [կայսրուհին շատ
կը վարանին] ներպայցիներու
ծանուցագրին մի քանի որո-
շումները ընդունելու: Անոնք
եան-Յէի երկու փոխարքաներուն
հեռագրեր են Իէքին երթալ
բանակցութիւնները վերսկսելու
համար: Փոխարքաները այդ ա-
ռաջարկը ընդունած են, սակայն
ասոնցմէ մին պայմաններ կա-
ռաջարկէ որոնցմով Մանչու-
կան հարստութեան ազդեցու-
թիւնը պիտի թուլնայ Չինաս-
տանի մէջ, Այդ պայմանները
հետեւեալները են:

Քարձումը ցեղերու տարբերու-
թեան: Ոչնչացումը թողանքի
որոնք կը վճարուին Մանչու-
ցեղապետներուն: Պարտաւորիչ
կրթութիւն և երկու ցեղերուն
համար ալ հանրային գաղտնիքի
թուան իշխանի ազդեցու-
թեան նուազելուն փաստը այն է
որ սոսոր որդին, կայսեր անմի-
ջական գահաժառանգը, եղբոր
քառասուն հարուած ստացեր է
ոտքերուն կայսեր նկատմամբ
յարգանքի մէջ թերանալուն
պատճառաւ:

— Անգլիական կառավարու-
թիւնը բուն կերպով կը բողո-
քէ Ռուսական ծրագրին այն կէ-
տերուն դէմ, որոնց համեմատ
Շանկայ-Քուանի երկաթուղիին
միոյն մէկ մասը կը մնայ Անգլիոյ
իսկ միւս մասը աւելի շատ իրե-
ղէններով Ռուսիա կը վերցնէ:

Թ Ո Ւ Ս Ի Ա

Դեկտեմբեր 11ին Վարչախոյսի
մէջ տնտեսք է լեհ հուշակաւոր
գրագէտ Հենրիկ Սէնկեւիչի գրա-
կան 30ամեայ յոբելեանը: Սէն-
կեւիչ աւելի նշանաւոր դարձաւ
իր «Հո՞ Երթաս» պատմական վե-
պով, Հոռոմի կեանքէն առնուած,
որուն մէջ նկարագրեց Քրիստո-
նէութեան մուտքը անբարոյա-
կանութեան գաղաթնակէտին հա-
սած Հոռոմի մէջ: Տօնախմբու-
թիւնը տեղի ունեցե՞ր է ոստիկա-
նապարտութեան թոյլտուութեամբ,
բայց անշուշտ իր արգոսային
հսկողութեան տակ:

Լեհ հասարակութիւնը փառա-
ւոր հանդէսով մը իր տաղանդա-
ւոր գրագէտը քաջալերելէն զատ,
զայն վարձատրե-
ր է նաև 100000
րուպլի տրժէք ունեցող գղեակ
մը և ուրիշ թանկագին նուէրներ
տալով:

Սէնկեւիչ շնորհակալութեան
ատենախօսութիւն մը ըրեր է,
որ նախապէս ուստական ամենա-
խիստ գրաքննութեան անցեր է:

Ս. Ծննդեան տօնին առթիւ
յառաջիկայ շաբաթ «Շարժում»
չի պիտի հրատարակուի:

«Կուրին ցասակը» և «Քարեկն-
դանի անկուտները» պիտի ներ-
կայացուին Վառնայի անձնուէր
երիտասարդաց կողմէ խնայատ
ազգային երկսեռ վարժարանաց,
Ծնունդի երկրորդ իրիկունը, կի-
րակի գիշեր:

Թ Վ Տ Ր Ո Ւ Ս Ա Ն Ի Ա Լ

Ի նպատ «նոր Աստղ» խմբին
յառաջիկայ կիրակի գիշեր ժամը
8 1/2 ին պիտի ներկայացուի
«Բատուայի բռնաւորը» թատե-
րախաղ 5 արար:

Խիստ ծիծաղաշարժ զաւելչող մը

Կ Մ Ի Ն Ի Ո Ւ Ա Ջ Գ

Սուրբ Փրկչի Ազգային Հիւանդանո-
ցի պատուարժան Հոգաբարձութիւնը
Պուլկարիոյ մէջ սպանու-
համար, ի
նպատ այդ բազմակարօս հասաստու-
թեան հրապարակ հանուած եւ մաս-
նաւոր խնամքով պատրաստուած ա-
ռաջին տեսակ սիկարի թղթէն հոս
զրկած ըլլալով, կը խնդրուի յարգոյ
հասարակութեանէն որ նախապատու-
թիւնն տայ այս թղթին, թէ անոր
ընծայած առաւելութիւններուն հա-
մար եւ թէ նպատակ ըլլալու համար
հարիւրաւոր խեղճերու հոգատարու-
թեան ղեկավարին եւ բազմապահանջ
գործին:

Դիմել Տիար Պիպերեանի վաճառ-
ատունը, միակ կեդրոնատեղի Պուլկա-
րիոյ համար, Տիպէք շէյմէ: